Մարտիրոս Եգիպտացի (*), և Գողգոթայի սրբավայրին մասին Երուսաղէմի մէջ Հայոց և Վրաց միջև պատահած կռիւը կ'յաջողի կարդացնել մեզ համար նախապէս բոլորովին նըպաստաւոր և յետոյ այլապէս գոհացուցիչ կերպով մը:

Այս երկու իրողութիւնները որոշապէս կ'հաստատեն Գահիրէի մէջ այդ միջոցին ուշագրաւ դիրքը հայ հասարակութեան, որ անտարակոյս ունէր իրեն սեփական եկեղեցիները:

Մեր հաւաքած խաչքարերէն մին, (տե՛ս Թիւ 9) որ ՊՂ (= 890 + 551) = 1441 թուականը կ'կրէ, և լեզուի մաքրութեան և ուղղագրութեան վաղնջականութեան տեսակէտով նշանակելի է, անշուշտ կ'պատկանէր ա՛յդ ժամանակի եկեղեցիներէն մէկուն:

---

(*) 1345—1367-ին եւս Երուսաղէմի պատրիարք էր Գրիգոր Արքեպիսկ. Եգիպտացի.— կէս դարու միջոցին Եգիպտոսի հայութեան ծոցէն Երուսաղէմի Աթոռին երկու գահակալներ ընծայուիլը բոլորովին աննշանակ իրողութիւն մը չէ, Եգիպտահայ հասարակութեան այդ շրջանին ազգային եկեղեցական կացութեան տեսակէտով: